



## **Կարգապահական գործ թիվ 19087**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2019 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 276-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ԹԻՎ ԿԳ/162-Ա**

### **ՓԱՍՏԱՔԱՆ ԼԻԼԻԿ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի և Հարություն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Գ. Գևորգյանի,  
քննության առնելով փաստաբան Լիլիկ Սիմիդյանի (արտոնագիր՝ 446) (**այսուհետ՝ նաև Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

### **Պ Ա Ր Զ Ե Ց՝**

#### **1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Քաղաքացի Անահիտ Թովմայանը (**այսուհետ՝ նաև Դիմող**) 04"07"2019թ. դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), ըստ էության, հայտնել է, որ ժառանգության գործով փաստաբան Լիլիկ Սիմիդյանին վճարել է 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ և տրամադրել ծննդյան, ամուսնության և մահվան վկայականների բնօրինակներ: Սակայն փաստաբանը չի պատասխանում իր զանգերին, կամ ասում է, որ կզանգի, բայց չի զանգում, ինչպես նաև չի վերադարձնում գումարը և փաստաթղթերը:

#### **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների Պալատի նախագահի 29.07.2019թ. թիվ 248-Ա/ԿԳ-19087 որոշմամբ փաստաբան Լիլիկ Սիմիդյանի

նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 3.6.1 ենթակետի և 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների խախտման հատկանիշներով:

01.08.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռիմա Մխիթարյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

### **3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որում հայտնել է հետևյալը:

Դիմողը ժառանգության գործով 2012թ՝ հոկտեմբերին Պատասխանողին է տվել իր սկեսրոջ՝ Թամարա Հակոբյանի և սկեսրայրի՝ Փայլակ Հարությունյանի մահվան վկայականների բնօրինակները, ամուսնու՝ Կարեն Հարությունյանի, որդու՝ Շահեն Հարությունյանի, դստեր՝ Մարիամ Հարությունյանի, ամուսնու քրոջ՝ Մարիամ Հարությունյանի, ամուսնու քրոջ որդիների՝ Գևորգ և Արման Համբարձումյանների ծննդյան վկայականները, իր և ամուսնու ամուսնության վկայականի բնօրինակը: Բացի այդ, Դիմողը 2012թ. հոկտեմբերին Պատասխանողին է տվել 700.000 ՀՀ դրամ, որից հետո Պատասխանողը Դիմողին հայտնել է, որ հարկերի բարձրացել են, ինքը չի կարող գործն ավարտին հասցնել և պահանջել է ևս 120.000 ՀՀ դրամ, այնուհետև պահանջել՝ 40.000 ՀՀ դրամ, ապա՝ ևս 40.000 ՀՀ դրամ: Արդյունքում Դիմողը Պատասխանողին վճարել է 900.000 ՀՀ դրամ: Մինչև 05.09.2019թ. Պատասխանողը գործն ավարտին չի հասցրել, Դիմողի զանգերին, գումարն ու փաստաթղթերը չի վերադարձնում:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացրել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին: Դիմողը Խորհրդի նիստից առաջ զանգահարել է Պալատ, հայտնել է, որ իր դիրքորոշմանն ավելացնելու ոչինչ չունի և խնդրել է Խորհրդին գործը քննել իր բացակայությամբ:

#### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

Գործի նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև Խորհրդի կողմից քննության ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացրել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

#### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

25.09.2019թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություններ չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 26.09.2019 թվականին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 05.11.2019թ. ժամը 19:00-ին և 26.11.2019թ. ժամը 19:45-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

**Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝**

1. Փաստաբան Լիլիկ Սիմիոյանը հանդիսանում է Անահիտ Թովմասյանի վստահորդը:

*Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով և Դիմողի բացատրությամբ:*

2. Պատասխանողը չի պատասխանում Դիմողի հեռախոսազանգերին՝ Դիմողին չտեղեկացնելով գործի ընթացքի մասին:

*Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով և Դիմողի բացատրությամբ:*

**6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Լիլիկ Սիմիոյանը փաստաբան է հանդիսանում 29.06.2005թ., և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (3 ավարտված վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը:

Խորհրդի 25.03.2015թ. թիվ ԿԳ/39-Ա և 17.09.2015թ. թիվ ԿԳ/88-Ա որոշումներով փաստաբան Լիլիկ Սիմիոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

Խորհրդի 17.12.2018թ. թիվ ԿԳ/220-Ա որոշմամբ փաստաբան Լիլիկ Սիմիոյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճարը վճարելու պարտականությունը չկատարելու համար, և տույժը մարվել է:

**7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

**Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լիլիկ Սիմիոյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջների խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների պահանջների մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

**7.1 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 3"6"1 ենթակետի մասով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է**

*ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

**Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.**

**Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:**

**ՄԱԿ-ի կողմից ընդունված Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետի համաձայն՝ փաստաբաններն իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության իրականացմանը նպաստելիս"" պարտավոր են մշտապես գործել ազատ և բարեխիղճ՝ օրենքի և փաստաբանի մասնագիտության ճանաչված չափորոշիչների և էթիկայի համաձայն:**

**Եվրոպայի փաստաբանների վարքագծի կանոնագրքի 3.1.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է իր վստահորդի շահերը ներկայացնել պարզաճ, գիտակցված և բարեխղճորեն: Փաստաբանը կրում է անձնական պատասխանատվություն վստահորդի հանձնարարությունների կատարման համար և պարտավոր է տեղյակ պահել վստահորդին գործի ընթացքի մասին:**

Փաստաբանի կողմից վստահորդին վերջինիս գործի ընթացքի մասին իրազեկելը և վստահորդի հարցերին պատասխանելը փաստաբանի մասնագիտական բարեխղճության կարևոր չափանիշներից մեկն է, ինչպես նաև փաստաբանական ծառայության պատշաճ մատուցման բաղադրիչներից է: Ընդ որում, նշյալ ենթակետի

խախտում կարող է համարվել և՛ վստահորդի հեռախոսազանգերին, էլեկտրոնային հաղորդագրություններին կամ կապի այլ միջոցներով ուղարկված նամակներին փաստաբանի անզգուշորեն կամ անփութորեն չպատասխանելը, և՛ նշված վարքագծի դրսևորումը դիտավորությամբ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում անձնական նախաձեռնությամբ վստահորդին հանձնարարության ընթացքի մասին փաստաբանի չտեղեկացնելը:

Փաստաբանի կողմից վստահորդի հետ պատշաճ և կանոնավոր կոմունիկացիայի պահպանումը փաստաբանական գործունեության բարեխղճության միջազգայնորեն ճանաչված սկզբունք է և, համաձայն վերը մեջբերված՝ Եվրոպայի փաստաբանների վարքագծի կանոնագրքի 3.1.2 ենթակետի, ուղղակիորեն կապվում է փաստաբանի մասնագիտական բարեխղճության և վստահորդի հանձնարարությունների կատարման համար փաստաբանի անձնական պատասխանատվության սկզբունքների հետ՝ վերջիններիս հետ կազմելով փաստաբանի մասնագիտական գործունեությանը ներկայացվող սկզբունքային պահանջները:

Սույն պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Դիմող Անահիտ Թովմասյանը ժառանգության գործով հանդիսանում է Պատասխանող փաստաբան Լիլիկ Սիմոնյանի վստահորդը և այն փաստը, որ Լիլիկ Սիմոնյանը չի իրականացրել պատշաճ և կանոնավոր կոմունիկացիա Անահիտ Թովմասյանի հետ, որի արդյունքում Անահիտ Թովմասյանը հնարավորություն չի ունեցել տեղեկացված լինելու իր գործի ընթացքի մասին:

**Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:**

**Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:**

Կարգի վերոնշյալ իրավադրույթներից հետևում է, որ կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնք Պալատի մոտ կարող են ձևավորել ողջամիտ համոզմունք, որ դիմումում նշված փաստական հանգամանքներն իրականում տեղի են ունեցել, և առկա է կարգապահական գործով պատասխանող փաստաբանի կողմից թույլ տրված՝ Օրենքով և Կանոնագրքով արգելված արարք: Եթե կողմը չի կատարում իր նշյալ վարույթային պարտականությունը, ապա կրում է դրա բացասական հետևանքը՝ փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի կարճման տեսքով:

Տվյալ պարագայում Դիմողը պնդում է, որ Պատասխանողը չի պատասխանել իր զանգերին կամ պատասխանելու դեպքում խոստացել է հետո զանգահարել, սակայն չի զանգահարել: Ըստ էության, Դիմողը Պատասխանողին մեղադրել է Կանոնագրքի 3.6.1

ենթակետով արգելված անգործության դրսևորման մեջ, և նման անգործունեության բացակայության փաստի ապացուցման պարտականությունը կրում է Պատասխանողը, քանի որ, բացառությամբ երևույթի բացակայության փաստը նյութական կրիչների միջոցով ապացուցվելու հնարավորության դեպքերի, հնարավոր չէ և ողջամիտ չէ երևույթի բացակայության մասին պնդում անող վարույթի կողմին պարտավորեցնել ապացուցել այդ երևույթի բացակայությունը:

Խորհուրդը գտնում է, որ տվյալ պարագայում Պատասխանողն ունի օբյեկտիվ և իրական հնարավորություն ապացուցել, որ Դիմողը նշյալ պնդումն անհիմն է, հակառակ պարագայում Պատասխանողը կկրի Դիմողի պնդումը հերքող ապացույցներ չներկայացնելու բացասական հետևանքը՝ Դիմողի պնդումն ապացուցված համարվելու տեսքով:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողը որևէ ապացույց չի ներկայացնել՝ հերքելու Դիմողի պնդումը, որ Պատաստախողը չի իրականացրել պատշաճ և կանոնավոր կոմունիկացիա իր հետ, ավելին՝ Պատասխանողը կարգապահական վարույթի ընթացքում Պալատին չի ներկայացրել որևէ բացատրություն, որևէ ապացույց, ինչպես նաև պատշաճ ծանուցված լինելով հանդերձ՝ չի ներկայացել իր գործով Խորհրդի նիստին: Հետևաբար Խորհուրդը հաստատված է համարում Դիմողի վերոնշյալ պնդումը և գտնում է, որ Պատասխանողի քննարկվող վարքագիծը հանդիսանում է Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 3"6"1 ենթակետի պահանջների խախտում:

## **7.2 Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների մասով**

**Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:**

**Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):**

**Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:**

**Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:**

Պալատը գտնում է, որ Դիմողի կողմից չեն ներկայացվել բավարար ապացույցներ, որոնք կարող էին վկայել Պատասխանողի կողմից Կանոնագրքի 3"8"5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների խախտման մասին, ինչը Դիմողը՝ որպես

կարգապահական վարույթի կողմ, պարտավոր էր անել: Մասնավորապես, Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ իր և Պատասխանողի միջև գործող պայմանագիրը լուծվել է, ինչն էական պայման է Կանոնագրքի 3"8"5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերություններով նախատեսված պահանջները փաստաբան Լիլիկ Սիմիդյանին վերագրելու և վերջինիս կողմից դրանց կատարման հանգամանքը քննության առնելու համար:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանող փաստաբան Լիլիկ Սիմիդյանի կողմից Կանոնագրքի Կանոնագրքի 3"8"5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների խախտման փաստը հանդիսանում է չապացուցված:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 3"8"5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

### **7.3. Կարգապահական տույժի ընտրությունը.**

Պալատը գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը՝ հետևյալ պատճառաբանությամբ:

**Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *Պալատը պարտավորվում է փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելիս ղեկավարվել համաչափության սկզբունքով, ինչպես նաև հաշվի առնել կարգապահական խախտման հետևանքները, իրավախախտի անձը, մեղքի աստիճանը և վերաբերելի այլ կարևոր հանգամանքներ:*

Պալատի խորհուրդը նաև հարկ է համարում անդրադառնալ Պատասխանողի պատասխանատվությունն անհատականացնող վերոհիշյալ հանգամանքներին:

#### *Համաչափություն*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժին ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության

անհատականացման չափանիշների կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

*Մեղքի աստիճանը*

Պալատը գտնում է, որ Պատասխանող փաստաբան Լիլիկ Սիմիոյանն Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտումը կատարել է դիտավորությամբ, քանի որ Դիմողի դիմումի համաձայն, Պատասխանողը չի պատասխանել իր զանգերին կամ պատասխանելով դրանց՝ խոստացել է զանգահարել ավելի ուշ, սակայն չի զանգահարել: Նշյալից հետևում է, որ Պատասխանողը գիտակցաբար չի իրականացրել Դիմողի հետ կոմունիկացվելու իր պարտականությունը:

*Կարգապահական խախտման հետևանքները*

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից Դիմողի չզանգահարելու և Դիմողի հեռախոսազանգերին չպատասխանելու վարքագծի հետևանքով Դիմողը հնարավորություն չի ունեցել տեղեկացված լինելու իր գործի ընթացքի վերաբերյալ:

*Փաստաբանի անձը, առկա տույժերը*

Խորհուրդը կարգապահական տույժն ընտրելիս հաշվի է առնում այն փաստը, որ Պատասխանող Լիլիկ Սիմիոյանը չունի չմարված կարգապահական տույժ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագծի օբյեկտիվ կողմի հանգամանքները վկայող փաստերը բավարար են՝ հավաստելու համար, որ Պատասխանողի կարգապահական պատասխանատվությունն անհատականացնող հանգամանքները հիմք են տալիս նրա նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

- 1. Փաստաբան Լիլիկ Սիմիոյանին (արտոնագիր՝ թիվ 446) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման համար.**
- 2. Փաստաբան Լիլիկ Սիմիոյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 446) կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն.**
- 3. Փաստաբան Լիլիկ Սիմիոյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 446) Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների պահանջների խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթը**



**կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:**  
**4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Հարություն Հարությունյան

**26 նոյեմբերի 2019թ.**

**թիվ ԿԳ/162-Ա**

**ք. Երևան**